



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3458

7924

P-924

2011

2004

792 Գ.
P-924:

Ա. Մ. ՎՐՈՅՐ

Դ. Կ. ԹՈՒՐԵԱՆԻ

ԵՐԵՄՆԱՍԵԱՅ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

1602

1860—1890

Տ Փ Խ Ի Ս
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՏԻ
1891

2603

22

Дозв. цензур. Тифлисъ, 5-го Ноября 1891 г.

Типогр. М. Д. Рогиніанца, на Гол. пр. д. № 41.



Dr. G. D. ...

Цен. Тифлисъ 5 Ноября 1891 г.

Лит. К. I. Мекхиева Тифлисъ

Գ. Կ. ԹՈՒՐԵԱՆԻ

ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Թէ որքան ծանր և տաժանակիր է բեմին ճա-
նայողի կեանքը առ հասարակ բոլոր ազգերի և մաս-
նաւորաբար հայերի մէջ, կարծում ենք որ ամէն մի
բանիմաց մարդու համար մի գաղանկը չէ, քանի որ
գերասանը ապրելով հասարակութեան մէջ, նորա
կեանքն էլ շոշափելի է նոյն հասարակութեան համար:
Գերասանի կեանքը ծանր և տաժանակիր անւա-
նելով չենք մատնացոյց անում բեմի վերայ ներկա-
յացնելիս նորա թափած քրտինքը, գործ դրած աշ-
խատութիւնները, բեմի և կուլիաների յատուկ ինտրի-
գաների զոհուելը, թատրօնի վերահսկող մարմիններից
նիւթապէս և բարոյապէս շարունակ հարստահար-
ւելը և այլն և այլն, այլ գլխաւորաբար ՚ի նկատի
ունենք երբեմն իրաւացի և շատ յաճախ անիրաւացի
հասարակութեան բոլոր դասակարգերի կշտամբանքի
և արհամարհանքի աւարկայ լինելը: Մենք ահա այս
կէտը միայն աչքի առաջ ունենալով գերասանի կեանքը

անուանեցինք ծանր և տաժանակիր: Հասարակութեան կարծիքը միշտ չէ կարելի անտես առնել. շինչ ուղում են թող խօսեն»-ը միշտ սառն արեամբ չէ կարելի արտասանել: Շատ յաճախ մենք ամէնքս էլ բռնազբօսիկ արտասանել ենք այդ խօսքը, բայց մեր սիրաբը շարունակ բողոքել է դորա դէմ:

Այս խօսքերը առ այժմ միմիայն պ. Թուրեանին է վերաբերում, քանի որ նա է երեսուն տարիների բեմական անվնաս զործունէութեամբ մեր դատաստանին ներկայացողը. երեսուն տարիներ... շատ հեշտ է արտասանելը. երեսուն, և ինչ տարիներ. Ասուածոյ աշխարհի վերայ կեանք ունեցող մի մարդու երիտասարդութեան երեսուն ամենազեղեցիկ տարիներ, և դրանք զոհուած են թատրօնին ո՛չ թէ խնայողաբար և արտունջով, այլ յօժարակամ և խնդութեամբ: Շատ ցաւ պատճառեցին նորան թատրօնական անձուկ ասպարէզի վերայ թափուած տասնեակ զոհերը, բայց երբէք չվհատեցրին. բեմի այդ անխոնջ զինուորը արտասուեց իւր շուրջը ընկած զոհերի վերայ, բայց դասակարգ չեղաւ: Յովհաննէս Աճէմեան, Խաչիկ Փափազեան, Քերովբէ Տէօյիւճեան, Տիրուհի Պէնյեան, Յովհաննէս Կիւրեղեան, Գարեգին Ռշտունի, Թաղուոր Նալեան, թատրօնի այս բոլոր զարդերը, թողախտացեալ անշնջանում էին իւր շուրջը: Տ. Արաքսիա խնայող իւր մազերն էր փետտում, իսկ տ. Արուսեակ լացնոր իւր մազերն էր փետտում, իսկ տ. Արուսեակ իբր կենդանի դիակ փողոցները թափառում, Միհրդատ Ամերիկեան յուսահատ մի գնդակով իւր դէմ-

բաղդ կեանքին վախճան էր դնում, հայ թատրօնի լուսաւոր Աստղիկը հանգում էր իսպառ, Մարի-Նւարդ Մօլիէրի մահուամբը բեմի վերայ էր անշնջանում, Մաղաքեան ընկնում էր կաթուածահար, իսկ մեծն Ադամեան, բեմի դիւցազնը, ընկնում էր շնջասպառ: Արանք հեռու չէին Թուրեանից, սրանք իւր ամենօրեայ ընկերներն էին, նրանց յետզետէ անկումը սպիտակացրին իւր մազերը, բայց սիրտը չվհատեցրին: Նա թատրօնի ուխտեալ զինուորն էր և պիտի մնայ մինչև իւր վերջին օրը:

Մենք, բեմի ուխտեալ և դեռափ դերասաններս չենք կարող առանց պատկառանքի յիշել այդքան քրտնաջան տարիները և չհիանալ տաղանդաւոր Թուրեանի արիւթեանը և համբերութեանը. այդ հիացմունքն էր որ մեզ գրդեց գրիչ ձեռք առնել և այդ անխոնջ զործունէութիւնը հայ հասարակութեան ներկայացնել:

* * *

Դաւիթ Կարապետեան Թուրեան ծնած է Կ. Պօլսի Պերա քաղաքամասի Թարրա-Բաշի թաղում 1840 թ. օգոստոսի 26-ին: Նորա հայրը Սալթան Մէջիդի շքեղ պալատի ոսկեղէն ասեղնաթել զործւածքների հայթայթողն էր և շատ փառաւոր կեանք էր վարում: Այդ ժամանակներ Կ. Պօլսի հայերի համար Վենետիկի Մխիթարեանների վարժարանից աւելի բարձր ուսումնարան չկար, և երբ Դաւիթ 14 տա-

րեկան դարձաւ, Կարապետ աղա իւր որդին Վենետիկ զրկեց ուսանելու համար: Թուրեան թէև այնտեղ ուսանում էր, բայց անհամբերութեամբ սպասում էր բարեկենդանի օրերին որ կարողանայ աշակերտական ներկայացումներում ցոյց տալ իւր ընդունակութիւնը: Գլխաւորաբար նորան տալիս էին հայ և իտալական լեզուներով կատակերգակ դերեր, որոնց մէջ մեծ ջաջողութիւն էր ցոյց տալիս: Այդ ժամանակից Թուրեան կոչուած էր արդէն ասպագայում հայ բեմի վերայ մի կարեոր տեղ բռնելու:

Իւր հիւանդութեան արտաճառաւ չ'կարողացաւ դպրոցի դասընթացը աւարտել, և 19 տարեկան Կ. Պօլիս վերադարձաւ: Կարապետ աղան իւր որդին արքունական ծառայութեան տեց: Արքունի փողերանոցում պալատական և կառավարչական ոսկեղէն և արծաթեղէն գործուածքների համար մի սենեակ էր յատկացուած և Թուրեան վարպետ Յակոբի հսկողութեան տակ այնտեղ այդ գործուածքների համար նրկարներ պէտք է պատրաստէր: Բայց Թուրեան Արքունի փողերանոցի տխուր և միօրինակ պարապմունքից աւելի բարձր պաշտօնի էր կոչուած: 1860 թ. կազմակերպվում էր «Արևելեան թատրոն»-ի համար առաջին հայ դերաստնական կանոնաւոր խումբը: Խմբի անդամներին, որոնց թւին էր պատկանում և Մաղաքեան, անձանօթ չէին Թուրեանի բեմական ընդունակութիւնները: Այդ պատճառաւ էլ 'ի նկատի ունէին Թուրեանին՝ իբր իրանց խմբի անդամ, և

երբ նրան գեղարեւստին ծառայելու հրաւեր եղաւ, զարթեցաւ նորա սրտում թաղնւած մի անբացատրելի զգացմունք. նա չ'իշեց Վենետիկը և բարեկենդանի ներկայացումները, և առանց երկար մտածելու մի կողմ շարտեց իւր զծագրութեան թուղթն ու մատիարը և հրածեշտ տալով իւր աշխատած սենեակի մուայլ պատերին և վարպետ Յակոբ աղային՝ ուղեւորվեցաւ դէպի թատրոն: 1860—61 թ. Կ. Պօլսի դերասանական առաջին խումբը կազմուած էր մի մասնաժողովի հովանաւորութեան ներքոյ, որի անդամներն էին պ.պ. Ալթուն-Իւլերի, Գր. Խուրդաշեան, Գր. Ֆրէնկեան, Յարութիւն Մէրեմ-Կուլի և ուրիշներ: Իրանց սեպհական միջոցները մի պատկառելի զումար դրած էին թատրոնական գործի համար: Թուրեան այդ խմբի հետ առաջին անգամ բեմ դուրս եկաւ «Յրկու չիսնապետներ» դրամայի Գուսթաւս սիրահար նաւապետի դերում: Նա չ'ունենալով մի որոշ ամպլուա՝ խաղում էր թատրերգական և կատակերգական ամէն տեսակ դերեր: Բայց Թուրեան կատակերգակ դերասանի ձիրքերով էր ծնուած և թատրոնական փորձած բէթիսօրի (Ասթի, իտալացի) աչքերից չ'փրկուեցաւ նորա ընդունակութիւնները: Այդ օրւանից նորան յատկացուեցաւ բացարձակապէս կատակերգակ դերեր, որոնց նա կատարեց և կատարում է ամենայն ճարպիկութեամբ: Այդ խումբը 'ի միջի այլոց բեմի վերայ էր դնում «Յրկու չիսնապետներ», «Րօպերթ աւազակապետ», «Յովին ու կեղծաւորը»,

«Թուղթ խաղացողի կեանքը» և այլն և այլն պիտե-
սանները:

Կազմակերպւած դերասանական առաջին խմբի
ներկայացումները շաբաթական 2—3 անգամ արւե-
լով երկու տարի շարունակուեցան, որի միջոցին յոռի
կառավարելուց վատնւեցաւ թատրոնի ամբողջ դրա-
մադուլը, ցրւեցան մասնաժողովի անդամները և դե-
րասանները:

* * *

Բայց այդ երիտասարդ դերասանների խումբը որ
ուրք էր դրել բեմի վերա և կամենում էր բեմով մի-
այն հայթայթել իւր ապրուստը՝ չ'յուսահատուե-
ցան թատր. մասնաժողովի ցրւելուց: Միացան դերա-
սաններն ու դերասանուհիք, կազմեցին ընկերակցու-
թիւն և 1863—64 թ. թատր. եղանակը Զմիւռ-
նիս անցկացրին, ուր արդէն արմատացած էր թատ-
րոնի զաղափարը և դոյութիւն ունէր «Վասպուրա-
կան» թատրոնը: Այդտեղ համարեա կրկնուեցաւ Կ.
Պոլսի ընկերաբուրքը և դերասանական խումբը թէ
նիւթապէս և թէ բարոյապէս վարձատրվեցաւ:

Ինչպէս Կ. Պոլսում, նոյնպէս և Զմիւռնիայում
Թուրեան յաջողութիւն ունեցաւ և հանդարտ բաց
ամուր քայլերով առաջ էր դիմում:

Զմիւռնիայի թատր. եղանակը դեռ չ'վերջա-
ցած որոշուած էր որ խմբի անդամները իրանց նպաստ
մէկ մէկ ներկայացումն տային: Աճէմեան, Էքշեան,

Մուսկեան, Պէնլեան, տալով իրանց նպաստները և մի-
մեանց մէջ չ'հասնաձայնութիւլ յետգհետէ գաղտագողի
Կ. Պոլիս վերադարձան: Արուսեակ, խմբի դրամատիք
դերասանուհին ամուսնացաւ, և երկրորդական դերա-
սանները մնացին միայնակ. այնպէս որ գործին ան-
տեղեակ, Թուրեան և Ֆասուլեաճեան իրանց նպաստ
ներկայացման յայտարարութիւնները կպցրին, բաց
չայտարարութիւնները յայտարարութիւն մնացին, և
խեղճ դերասանները վշտացած նկատեցին որ խմբի
առաջնակարգ ոյժերը հեռացած են և անկարելի էր
ներկայացումը տալը: Անգործ և անպաշտպան մնա-
ցած թշուառ դերասանները որը իւր անից փող բե-
րել տալով և որն էլ հանդանակութեամբ Կ. Պոլիս
վերադարձան: Իսկ Թուրեան ինքնօգնութեան դիմեց,
ձեռք առաւ մատիտն ու վրձինը և սկսաւ աշխատել
լուսանկարիչ Ապտուլլահ եղբայրների գործարանում:
Զմիւռնեայում մէկ ու կէս տարի մնաց Թուրեան, ա-
մուսնացաւ և 1869-ին Կ. Պոլիս վերադարձաւ: Իւր
Զմիւռնիայում բնակած միջոցին շարունակ մասնակ-
ցել է թատերասէրների ներկայացումներին:

Թուրեան Կ. Պոլիս վերադառնալով հայ բեմը
խեղճ վիճակի մէջ գտաւ: Զմիւռնիայից փախչող ա-
ռաջնակարգները ցրուած էին մէկ մէկ կողմ. իսկ Յա-
կոբ Վարդուկեան մնացած երկրորդական դերասաննե-
րից կազմած էր իւր խումբը մեծ մասամբ թուրքերէն
և երբեմն էլ հայերէններ կայացնելով: Թուրեան խմբի
թոյլ վիճակը տեսնելով, սկսեց աշխատել Յակոբ և

Սարգիս Բէջ Պալեանների ճարտարապետութեամբ կառուցվող Զրազանի պալատի նկարչական մասում: Երբեմն միայն Վարդովեանի հրաւերով օրական վարձ տոանալով մասնակցում էր ներկայացումներին:

* * *

1870 թ. Ծասուլեաճեան իւր Կովիաս և Ռուսաստան կառարած դերասանական մեծ ճանապարհորդութիւնից Կ. Պօլիս վերադարձաւ, և Նոր-Նախիջևեանում հայերէն ներկայացումներ տալու համար մի խումբ կազմակերպելու ձեռնարկեց: Հրաւիրեցան թուրեան, Աղամեան, Աճէմեան, Թաշճեան, Փափագեան, Գալֆաեան, Մարի-Նուարդ և Արաքսիա: 1870—71 թ. Նոր-Նախիջևեանի թատր. եղանակը շաբաթական 2 ներկայացումն տալով հասաւ իւր տխուր վախճանին: Խումբը դարձեալ ցրուեցաւ: Հեռացաւ Ծասուլեաճեան, հեռացաւ Աճէմեան, իսկ մնացեալ բոլոր դերասանները հացի կարօտ մնացին: Թուրեան դարձեալ ալեւորից ճարպիկը գտնուեցաւ: Ներկայացաւ Նախիջևեանի այն ժամանակուայ քաղաքադուլիս պ. Պլօանիկօվին, յայտնեց խմբի թշուառ վիճակը և իւր նոր շինուած տան մէջ աշխատելու ցանկութիւնը:

— Ի՞նչ գործ կարող ես կատարել, հարցրեց բարեսիրտ Պլօանիկօվը:

— Ձեր տան առջև ու պարտաւէջ կը նախշեմ, պատասխանեց թուրեան:

— Փորձեցէք տեսնեմ. եթէ հաւանեմ ձեզ գործ կուտամ:

Միւս օր թուրեան վրձինը ձեռք առաւ: Երկու շաբաթից յետոյ քաղաքադուլիս տան սրահի առաստաղը գեղեցիկ նկարներով զարդարուած էր: Նախշեանցիք գալիս էին խումբ խումբ տեսնելու այդ գեղեցիկ նախշուն առաստաղը: Ապստրանքներ թափվում էին ամէն կողմից, իսկ Փափագեան և Աղամեան բարձրացած ներկարարի եռատանի սանդուխքի վերայ՝ օգնում էին թուրեանին: Այդ միջոցին Նախիջևեանում գտնուող բոլոր դերասաններին ապրեցնում էր թուրեան իւր վրձինի շնորհիւ:

Թուրեան վրձինը ձեռք առնելով հանդերձ չհրաժարեցաւ բեմին ծառայելուց: Արժաթպանեան եղբայրների հետ սիրողների մի խումբ կազմեցին և սկսան ներկայացումներ տալ: Իւր վարքով, խաղով և ջանասիրութեամբ թուրեան Նոր-Նախիջևեանցիների սիրելի դերասանը դորձած էր. և մինչև օրս էլ նախիջևեանցիք պահած են նրա քաղցր յիշատակը:

1872 թ. Լականի վերջերքին թուրեան իւր ընտանիքով Կ. Պօլիս վերադարձաւ: Այդ միջոցին հայ թատրօնի միակ պաշտպանի, Յակոբ Բէջ Պալեանի հովանաւորութեամբ կազմակերպուած դերասանական խումբը Օրթա-զիւղում ներկայացումներ պէտք էր տալ և թուրեան իւր վերադարձից անմիջապէս յետոյ հրաւիրեցաւ նոյն խմբին մասնակցելու: Այդ եղանակում առաջին անգամ խաղացում էր «Փարիզու

Աղքատներ», «Լիօնի Սուբհանդակ», «Վոյրն Տիրան»),
 «Սէր և Հաւատարմութիւն», «Արշակ Բ.» (Եմմանուէլ
 Եսայեանի), շերկու տերանց մի ծառայ և այլն և այլն:
 Օր. Փէմբէ, Յակոբ Բէչի կինը, յաջորդ տարին
 վախճանեցաւ. և Պալեան, հոգեով վշտացած, թողեց
 Պօլիսը և հեռացաւ. այդ պատճառաւ էլ յաջորդ
 տարին դերասանական խումբը չկարողացաւ Օրթա
 գիւղում իւր ներկայացումները շարունակել: Յակոբ
 Բէչի հեռանալը և քիչ ժամանակից յետոյ էլ նորա
 մահը մեծ վնաս տւեց Կ. Պօլսի հայ-թատրոնական
 գործին:

»
 *
 * *

1874 թ. Քուրեան սկսեց ներկայացնել Վար-
 դովեանի խմբում: Դեռ 1867—68 թւականներէից
 Վարդովեան ունէր իւր խումբը և անընդհատ շա-
 րունակում էր իւր ներկայացումները, սկզբում հայե-
 րէն, վերջերս համարեա միշտ թուրքերէն, այնպէս
 որ հայերէն ներկայացումների համար շարունակ ա-
 ռանձին խմբեր էր կազմվում, ինչպէս Հէքիմեանի և
 Օրթա-գիւղի խմբերը:

Ներկայացվում էր Քէմալ Բէչի «Վաթան» (հայ-
 րենիք) դրաման, ուր Քուրեան առաջին անգամ
 մասնակցում էր: Հազիւ աւարտած էր ներկայացումն
 Ա. արարածը, երբ թատրոնը զօրքերով պաշարուեց:
 Հեղինակը և խմբի կառավարիչը ձերբակալուեցան և
 ներկայացումը արգիլուեցաւ իբր իւր մէջ ազատ գա-

ղափարներ պարունակող գրուածք: Հեղինակը աքսոր-
 ուեցաւ և աքսորանքի մէջ էլ մեռաւ:

Վարդովեանի խումբը իւր սովորութեան համե-
 մատ յուլիսի 1-ից պէտք է սկսէր իւր ներկայացում-
 ները, և մինչև այդ ժամանակ դերասանները անգործ
 չ'մնալու համար մի ընկերակցութիւն կազմեցին և
 Սալօնիկ գնացին ներկայացումներ տալու: Ինչպէս
 Տաճկաստանի ամեն կողմեր նոյնպէս և Սալօնիկում
 տարածուած էր «Վաթան»-ի գլխին պատահած փոր-
 ձանքը, և երբ քաղաքի կառավարիչ փաշան լսեց
 դերասանների գալուստը, կարծելով թէ սոքա էլ Քէ-
 մալ Բէչի Պօլսից փախստական ընկերներն են, ան-
 միջապէս ձերբակալել տւեց խմբի գլխուոր դերասան-
 ներին և զինուորներով շրջապատելով շոգենաւուն
 յանձնեց Պօլիս ուղարկելու համար: Կերասաններից
 մի քանիսը մինչև շոգենաւ հասնելը մէկ մէկ միջո-
 ցաւ փախան, մի քանիսն էլ բժշկի վկայականով հի-
 ւանդ եղան պառկեցան, այնպէս որ Պօլիս աքսոր-
 ուելու համար շոգենաւ հասան միայն Քուրեան և
 Մնակեան: Այսպէս եղաւ Սեծ-եպարքոսից թուղթ
 ներկայացնել նահանգապետ փաշային. որից յետոյ
 այդ քաղաքում նրանց ներկայացումները թոյլատր-
 ւեցաւ:

Նոյն տարուայ ամառը իւր պայմանի համեմատ
 վերադարձաւ Կ. Պօլիս, և սկսեց ներկայացնել Վար-
 դովեանի խմբում, ուր անընդհատ հինգ տարի մնաց:
 Նոյն խումբը ներկայացնում էր և օպերէտներ, որոնց

մէջ Թուրեան մեծ յաջողութիւն ունեցաւ: Այդ խմբի
 ղեպէրտուարում 'ի միջի այլոց կար «Հայկ Դիւցազն»,
 «Քաղաքիք Հնգկատանի», «Սև հողեր», «Ամերիկայի
 ծովահէք», «Կ. Պօլսոյ թշուառները», «Արայ Գեղե-
 ցիկ», «Թափառական Հրէայ», «Կոմս Մօնթէ Քրիսթօ»
 պիէսները: Իսկ օպերէաներից «Կեղեցիկ Հեղինէ»,
 «Լէբլէբիշի Հօր-հօր», «Մազամ Անգօ», «ԺիրօՖլէ-
 ԺիրօՖլա», «Արիֆի Խարդախութիւնը», «Աւազակներ»,
 «Քէօսէ Քէհեա», «Մեծն Մօղօլ», «Փէմբէ աղջիկը»,
 «Ձէյբէքներ» և այլք: Այս բոլոր օպերէաներում Թու-
 րեան այնպիսի դերեր էր խմղում, որոնց դժուար
 թէ մի ուրիշը փոխարինէ նոյն յաջողութեամբ և
 ճարպիկութեամբ:

Իւր հնգամեայ անընդհատ ներկայացումների ա-
 մառնային երեք ամիս արձակուրդներին իւր դերասան
 ընկերների հետ միանալով մօտակայ քաղաքներ էր
 ճանապարհորդում:

1878 թ. Պէնսիլանի կազմած օպերէատային խում-
 բին հետ Ադրիանապօլիս ուղևորուեցաւ, ուր ուսու-
 ներ բանակած էին: Այդ քաղաքում ներկայացումնե-
 րը աւելց մի ամբողջ տարի:

1879 թ. կրկին հրաւիրուեցաւ Վարդովեանից
 իւր խմբին մասնակցելու համար՝ ուր մնաց մի տարի:

*
 * *

Ծերունի Ահմէդ Վէֆիկ փաշա Բրուսայի կուսա-
 կալն էր, երբ Պատուէաճեան գնացել էր այնտեղ

ներկայացման պատրաստութիւններ տեսնելու: Երբ
 ներկայացումների թույլատուութեան համար Պատու-
 լէաճեան խնդրողի ներկայացրեց փաշային, փաշան
 ներկայացնելիք ղեպէրտուարը պահանջեց:

— Սորանց մէջ ոչ մի հատ Մօլէրի պիէսա չ'կայ,
 սասց փաշան պիէսաների ցուցակը կարդալով:

— Այո՛, չենք խաղում:

— Ինչէս կարելի է Մօլիէրի պէս մի հեղինակի
 տնտես առնել և յետոյ աւելացրեց. դու գնաց խում-
 բը բեր, իսկ ես կըսկսեմ Մօլիէրը թարգմանել:

Թատերասէր փաշան ամեն կերպ քաջալերու-
 թիւն և յոյս աւելց Պատուէաճեանին, որ Պօլիս գը-
 նալով իւր խումբը կազմակերպեց և Բրուսա փոխա-
 դրեց: Բրուսան առաջին անգամ էր որ այնպի-
 սի կանոնաւոր խումբ էր տեսնում: Մօլիէրաճօլ փա-
 շան ոչ միայն հովանաւորում էր խմբին, այլ և
 շարունակ յաճախում էր կրկնութիւններին և ղե-
 բասաններին վարձատրում էր նիւթապէս և բու-
 յոյապէս: Թուրեան, իբր Մօլիէրի ստեղծագործու-
 թիւնների զլխաւոր դերերը կատարող փաշայի ա-
 ուանձին ուշադրութեանը արժանացաւ: Բացի Թար-
 թիւֆից, (որ Պատուէաճեան էր խաղում) Մօլիէ-
 ղի բոլոր զլխաւոր հերոսներին Թուրեան մեծ ճար-
 ատութեամբ ներկայացրեց:

Բայց Թուրեանի ճակատագիրն էր թափառել:
 Բրուսայում խումբը երկու տարի շարունակ ամենայն
 յաջողութեամբ ներկայացումներ տալուց յետոյ ցրե-

ցաւ, որովհետեւ իւր թատրոնասիրութեան համար փաշային հրաժարեցրին պաշտօնից և խուճբը մնաց անպաշտպան:

1882 թ. Թուրեան Ծասուլեաճեանի խմբի հետ Բուլղարիա ուղևորուեցաւ և այնտեղ մի տարի մնալով 1883-ի աշնան եկաւ Տիփլիս:

Նոյն թւականին պ. Ամշկեան, բոլոր տեղական ոյժերը հաւաքած հայ թատրոնը ուրբի կանգնեցնելու փորձեր էր անում: Ա. և Բ. ներկայացումները հազիւ ծախսերը ծածկեցին: Ներկայացումները իրանց ծնունդեան հետ մօտ էին վախճանի՝ երբ հասաւ Թուրեան: Նորա առաջին «Դօն Գրէգորիօն» չ'ծածկեց ծախսը և ներկայացումը պէտք է յետաձգուէր, եթէ իշխ. Ամատունի և հանգ. Աղ. Թահիրեանց ծախսը չ'ծածկէին: Թուրեան երևեցաւ բեմի վերայ և այն գիշերուայ սակաւաթիւ հանդիսականների խնդութեանը չափ ու սահման չ'կար: Նա մի շարք ներկայացումների մասնակցելով ապացուցեց որ ինքը դերասանական խմբի համար մի մեծ և անհրաժեշտ ոյժ է և այդ համոզմունքն էր որ ներկայ թատր. մասնաժողովին ստիպեց հրաւիրել Թուրեանին: 1883—84 թ. թատր. եղանակում, նորա «Դօն Գրէգորիօն», «Աստղագէտը», «Սկապէնի խարդախութիւնները», «Մի հարսնացուն», «Սենդերի բժիշկը», «Տիփլիսը ննջումէ -ն և «Կողոպտած փոստ»-ի Շոպարը մէկ մէկ գոհարներ էին:

Այդ ներկայացումները հազիւ ապրեցնում էին Թուրեանին, այնպէս որ նա ստիպվում էր յաճախ

վրձինը ձեռք առնել: 1884 թ. դարնան վերադարձաւ Կ. Պօլիս՝ թատրոն յաճախող հասարակութեան սրտում քաղցր յիշատակներ թողնելով: Կ. Պօլիս վերադառնալով Թուրեան ոչ հանգիստ և ոչ էլ դադար ունեցաւ: Կրկին և կրկին անգամներ այցելեց Նզդիստոս, Աղբիւնուպօլիս, Սալօնիկ, Զմիւռնիա, Աթէնք, Պիրէա և այլն և այլն. երբեմն օպերէտային և երբեմն էլ դրամատիքական խմբերով. 1890 թ. ձմրան Թուրեան մասնակից էր անմահ Ազամեանի վերջին ներկայացման «Սէր առանց համարման»-ին:

Նոյն թւականի վերջերքին Թուրեան Զմիւռնիա իւր ընտանեաց զիրկը վերադարձաւ: Նա կանգ առաւ պահ մի. դարձրեց աչքերը դէպի այն փշոտ ճանապարհը, որի հեռաւորութիւնը կորչում, աներևոյթանում էր մէջի ու մնաւախուղի մէջ: Երեսուն տարիների ընթացքում անցկացած ճոնսպարհն էր այդ: Սոյ, ծարաւ, նեղութիւն, տանջանք, տառապանք, ոչինչ չէին վհատեցրել նրան. նա չէր թողել իւր ձեռքի ցուպը, բաց յոգնել էր: Ամէն մի տարին իւր դրոշմը դրել, ակօսել էր նորա դէմքը և մազերը արեւախառնել: Նա բաւական էր համարում իւր չարչարանքը և ուզում էր հանգստանալ: Իւր սրտակիցները միևնոյնը կրկնում էին նորան: 1891 թ. յունւարից նա որոշեց վերջնականապէս հրաժարել բեմից և առևտրով զբաղուել և արդէն զործի էլ ձեռնարկած էր, երբ յուլիս ամսին թատր. մասնաժողովի կողմից հրաւեր ստացաւ 1891—92 եղա-

1891
1892

նակի Տփլիսի ներկայացումներին մասնակցելու: Քուրեան ամէն բանից առաջ դերասան էր. զարթեցաւ իւր առժամանակ թմրած հոգին, արովեց սիրալը, կենդանացան վաղեմի արթիտի հին չիշատակները, նա զգաց որ դեռ ինքը բեմի մշակն է, և թէ իւր բեմից հրաժարւելու մտադրութիւնը արգելք չէ եղած իրան բեմից հեռանալու: Եւ ո՞վ էր հրաւիրողը, Տրփիսը, այն քաղաքը, որ Կ. Պօլսի դերասանների առաջ այն նշանակութիւնն է ստացած՝ ինչ որ ունէ ուխտատեղին բարեպաշտ ծերունիի համար: Քուրեան նորից ձեռք առաւ ճանապարհորդական ցուպը, և եկաւ Տփլիս, որ թէև նորան երջանիկ օրեր չէր ցոյց տուել, բայց նորա սրտում թողել էր այնպիսի չիշատակներ, որոնց չէր կարող շուտ մոռանալ: Քուրեան մեր գրկումն է այժմ:

* * *

Քուրեանի երեսնամեաց բեմական գործունէութիւնը որքան կարելի էր համառօտակի հայ հասարակութեան ներկայացրինք: Այդ կիանքը մանրամասնաբար նկարագրել՝ նշանակում է հայ թատրոնի պատմութիւնը գրել, որովհետև Քուրեանի անունը կապուած է զորա հետ, իսկ այդպիսի լուրջ աշխատութեան համար այժմ չէր ներում մեր ժամանակը: Քուրեան այն տեսակ գործիչներից չէ, որոնք իրանց մի ամենաչնչին աշխատանքն անգամ սիրում են մտնեմիկի բերնով աշխարհին հռչակել: Երեսուն տարի-

ներ նա ամենայն համբերութեամբ քաշել է թատրոնի ծանր լուծը և ամենավտոր ճիկ անգամ չէ հանել: Երեսուն տարիներ ցաւել է նորա սիրալը (քանի որ ցաւն ու վիշտն է բեմի ծառայողի ընկերը) և այդ ցաւը նա ոչ ոքի չէ յայտնել: Երեսուն տարիների ընթացքում բեմի պատճառաւ շատ անգամ նա հացի կարօտ է մնացել, բայց նրա զանգատը մարդ չէ լսել, Երեսուն պատկառելի տարիներ շարունակ ծառայել է բեմին և բեմի վերայ նոր ոտք դնող դերասաններից աւելի համեստ է եղել: Եւ Քուրեանի երեսուն տարիները հաշւած չեն տարին 1—2 անգամ բեմի վերայ երևնալով: Այդ երեսուն տարիների ընթացքում շատ հազուադէպ շաբաթներ են եղած որ տաղանդաւոր դերասանը հանգիստ շնջել է: Շաբաթական 5—6 անգամ էր նա ներկայացնում, իսկ առնւազն (որ շատ հազուադէպ էր) 3 անգամ, որին անխօս վկայներ են թատրոնի զանազան կառավարիչների հետ իւր կնքած պայմանագրութիւնների մի խոշոր ծրար: Այս խանդոտ գործունէութիւնն էր պատճառ, որ Կ. Պօլսի հայ բեմը այդպիսի բազմաթիւ և վաղամեռիկ զոհեր ունեցաւ:

Հասարակութեան մտաւոր զարգացման նպատող ամէն մի հաստատութեան աշխատաւորները, որոնց թւին պատկանում են դերասանները, արժանի են հասարակութեան լուրջ ուշադրութեան: Քատրօնը ինքն իրան չէ հաստատուում, դերասանները իրանք իրանց չեն յառաջ զուլիս և տաղանդները չեն

բունում: Հաստատ պահեցէք թատրօնը՝ զերասաններ կը ծնանին, պահեցէք զերասանները՝ տաղանդներ յառաջ կուգան: Կովկասը չէր ձանաչում թուրեանին, բայց ձանաչած օրից հռչակեց նորան ստաղանդաւոր զերասան: Եւ Տփլիսիսը պէտք ունէ թուրեանի պէս մի զերասանի, որովհետեւ թուրեան այնտեսակ զերասաններից է, որոնք օղակ են դառնում հասարակութեանը թատրօնի հետ կապելու:

Թուրեան երեսուն տարիներ անընդհատ աշխատեցաւ բեմի համար, այժմ հասարակութեանն է մընում զնահատել ըստ արժանոցն նորա աշխատութիւնները: Գնահատութիւնը և քաջալերութիւնը ամբողջում է թուրացած և վհատուած սրտերը, և նոր ոգի, նոր աշխոյժ է ներշնչում գործիչին՝ իւր սկըսածը մինչև վերջ տանելու: Տաճկաստան իբր զարգացման ստոր աստիճանի վերայ կանգնած մի երկիր, չէր կարող ոչ մի տաղանդի արժանաւալացել կերպով զնահատել: Այդ է պատճառը, որ այնտեղ տաղանդները կորչում են աննշան: Բայց թուրեան բաղբաւոր է, որ զտնւում է աւելի զարգացած հասարակութեան մէջ, որ զնահատող է արուեստին և վարձատրող աշխատաւորին:

Թուրեան մեծ վարձատրութիւնների յուսով բեմ չէ դուրս եկել. իւր տաղանդն ու ընդունակութիւններն մղել են նրան այնտեղ: Բայց հասարակութեան հասկացող մասի պարտքն է երեսուն տարիներ աշխատողի քրտինքը զնահատել և այդ զնահատու-

թեամբը բեմի վերայ աշխատողի քայլերը ամրապնդել: Որքան էլ հաստատուկամ լինի աշխատողը և որքան ամուր քայլերով դիմէ իւր նպատակին, այնու ամենայնիւ նա կը թուլանայ, նորա սաքերը կը զոզողօն և կընկնի ուժասպառ. բայց հասարակութեան մի ձայնը, մի խրախոյսը կը վերագործնէ սպառուած ոյժերը և կը ոգևորէ վհատուած հոգին: Երեսուն տարիների աշխատութիւններից յետոյ յոգնած էր թուրեան և մտադիր բոլորովին հեռանալու բեմից, բայց Տփլիսիի հայ հասարակութեան ձայնը, որոնց զգացումներին նա ծանօթ էր, կոչեց նորան կրկին բեմին ծառայելու: Թուրեան զլլիկոր հնազապեցաւ այդ հրամանին, և իբր համեստ մարդ եկաւ իւր սիրած բեմին վերայ աշխատելու. բայց նորա զալուստը Հայ թատրօնի բարեկամների համար մտածելու առարկայ է դառնում: Այդ համեստ աշխատաւորը բեմի վերայ քրտնել, տքնել է երեսուն տարիներ. պարտաւոր չէն արդեօք թատրօնի բարեկամները ասնել աշխատաւոր թուրեանի երեսնամեայ բեմական գործունէութիւնը: Պաշարձաւոր չէ արդեօք, որ թուրեան մեզ մօտ աշխատելու զալիս՝ զտնէր և նիւթական ու բարոյական վարձատրութեան:

Թուրեան պէտք է որ նիւթապէս վարձատրուի: Նա իւր ոտքը դրել է արդէն ճերութեան սանդուղքների վերայ և մեծ ցաւ պիտի լինի թատրօնի բարեկամների սրտին, երբ տեսնէ բեմի մշակին, երիտասարդութեան մտաող տարիները բեմի վերայ սպա-

աւժ աշխատաւորին, ծերութեան օրերում անօթի և անօգնական՝ կարօտ ողորմութիւն:

Թուրեան պէտք է որ բարոյապէս վարձատրուի և այդ վարձատրութիւնը ոչ միայն պիտի ամրապնդէ տաղանդաւոր Թուրեանի սիրտը, այլ և պիտի քաջալերէ նրանց՝ որոնք աշխատում են հայ բեմի համար: Այդ օրը թատրօնի գաղափարի յաղթութեան տօնը պէտք է լինի:

Բեմի համար աշխատողի նիւթական և բարոյական վարձատրութեան մասին մեր խօսքերը բաւ և շատ իսկ համարելով, թատրօնի բարեկամների ուշադրութիւնն ենք հրաւիրում մեր աւաջարկութեան վերայ:

Արկնում ենք, թատրօնի բարեկամները տօնելով Թուրեանի երեսնամեայ բեմական անխոնջ գործունէութիւնը, ոչ միայն պիտի քաջալերեն Թուրեանին, այլ պիտի խրախուսեն նորա ընկեր գերասաններին ևս, որպէս զի նոքա միանալով երեսնամեայ աշխատաւորի հետ, միշտ բարձր պահեն այն դրօշակը, որի վերայ գրուած է՝

«ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ»:

3458

0012527

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0012527

